

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇՈՒՇԻԿ ԱԼԲԵՐՏԻ

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության
մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ի.Կ. Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆ. **Ս. Զ. Գասպարյան**

Մանկավարժական
գիտությունների
թեկնածու **Ի. Վ. Մադոյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Հայ-ռուսական(Սլավոնական)
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 14.⁰⁰ -ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 18-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար,

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անգլերենի եկեղեցակրոնական բառապաշարը հետաքրքրություն է ներկայացնում քերականության տեսության, բառագիտության, տեքստի և խոսույթի վերլուծության, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման տեսանկյունից: Այն հիմնականում ուսուցանվում է ԵՊՀ-ում, Գևորգյան հոգևոր ճեմարանում, Սևանի Վազգենյան դպրանոցում:

Վերջին տարիներին հարացուցային փոփոխությունների է ենթարկվել լեզվադիդակտիկան, և այդ համատեքստում վերանայվում են մասնագիտական կողմնորոշման անգլերենի տեխնոլոգիաները, ռազմավարությունները:

Ապագա աստվածաբանները, կրոնագետները լուրջ դժվարություններ ունեն հատկապես եկեղեցակրոնական թեմաներով քննարկումների մասնակցելիս: Նրանք դժվարությամբ են իրենց օտարալեզու խոսքի մեջ գործածում առօրյա-խոսակցական լեզվակաղապարներ: Ինչ վերաբերում է անգլալեզու եկեղեցու սպասավորներին բնորոշ խոսքային կաղապարների իմացությանը, ապա այդպիսի խնդիր ուղղակիորեն չի դրվում: Ուսանողները հեշտությամբ են յուրացնում անգլերեն եկեղեցակրոնական տերմինները, սակայն ամենօրյա-խոսակցական թեմաներով զրուցել, քննարկումներ կազմակերպել դժվարանում են: Դա վերաբերում է և՛ պատրաստված, և՛ ինքնաբերական խոսքին:

Համապատասխան դասընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցու կյանքին, կենցաղին, կրոնական տարաբնույթ ծառայություններին վերաբերող բառապաշարի ուսումնասիրությունը նույնպես տարիներ շարունակ չի արժանացել համապատասխան ուշադրության:

Խնդիր է դրվում անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցումն իրականացնել ավանդական և ժամանակակից տարաբնույթ տեքստերի միջոցով, որոնք մատչելի են ոչ միայն մանուկի, զրահրատարակության, այլև համացանցի, հեռահաղորդակցական միջոցներով: Այդ համատեքստում փոխվում է խոսքային և ոչ խոսքային միջոցների հարաբերակցությունը, երբ կիրառում են այս կամ այն արտահայտությունը, տեքստը, խորհրդանիշը ուսուցողական նպատակներով: Առաջին պլան է մղվում ոչ խոսքային բաղադրամասը, որը կարող է ներկայացնել եկեղեցակրոնական պատկերները, եկեղեցիների, հարակից շինությունների, դրանց առանձին մասերի նկարները, Երուսաղեմի և այլ կրոնական նշանակություն ունեցող բնակատեղիների քարտեզները, և այլն, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից կրոնական, աստվածաբանական, եկեղեցական տեքստերը:

Չայ եկեղեցու նվիրյալներին, սպասավորներին վերաբերող տեքստերում կարելի է հանդիպել բազում տեղանունների, անձնանունների, կենդանիների անունների, որոնց թարգմանությունը կամ գրադարձումը հայերենից անգլերեն կարող է որոշակի դժվարություններ առաջ բերել: Նույնը վերաբերում է անգլերեն համապատասխան եկեղեցակրոնական բնույթի իրակությունների յուրացմանը, առ այն, որ աստվածաբանական ֆակուլտետում այլ կրոնական ուղղվածության դասընթացներում ուսանողները միայն աստվածաշնչյան տեքստեր չեն ուսումնասիրում: Ասվածի համատեքստում կարևորվում են ազգամշակութային նշույթավորում ունեցող եկեղեցակրոնական բառերը, ընդհանուր առմամբ՝ անհամարժեք բառապաշարը:

Եկեղեցակրոնական մասնագիտական ենթալեզուն բացի ծեծված անվանումներից և հատուկ բառերից ներկայացնում է տերմիններ և համապատասխան տերմինակապակցություններ:

Անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի երկրորդ շերտը կազմում է կրոնական սպասավորների, կրոն դասավանդողների, քարոզողների ամենօրյա-խոսակցական լեզուն, որը բաղկացած է որոշակի մասնագիտական բառերից ու ժարգոնիզմներից և գործածվում է որպես տվյալ ոլորտում աշխատող մարդկանց ամենօրյա շփման միջոց:

Գաղտնիք չէ, որ կրոնական տերմինները և նորագույն հասկացությունները, նորաբանություններն ուսումնասիրության համար դժվարություն են ներկայացնում, անկախ այն բանից, թե դրանք ինչ լեզվով են ուսումնասիրում: Այստեղ առաջ է գալիս մասնագիտական կողմնորոշման բառապաշարի նվազագույնի ընտրության հիմնախնդիրը:

Այսպիսով, անգլերեն եկեղեցակրոնական հասկացությունների ընտրության և ուսուցման մեթոդական համակարգի ստեղծման արդիականությունը կասկած չի հարուցում:

Չետագոտության նպատակն է մշակել կրոնական հասկացությունների, դրանց զուգորդական դաշտում շրջանառվող բառապաշարի, ընդհանրապես, դարձվածապաշարի, մասնավորապես, ընտրության և ուսուցման մեթոդական համակարգ, որը ներառում է կրոնական-կրոնագիտական, եկեղեցակրոնական-ազգամշակութային և սահմանային-խոսակցական բառաշերտերի ուսուցման և յուրացման մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Չետագոտության օբյեկտը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման համակարգն է ոչ լեզվական բուհում:

Չետագոտության առարկան անգլերեն եկեղեցակրոնական հասկացությունների ուսուցման մեթոդական համակարգն է աստվածաբանական ֆակուլտետում:

church-religious vocabulary in terms of communicative-cognitive approach.

The practical value of the research.

The results obtained and the main provisions may be used in the design and organization of vocational-oriented courses, when planning new lessons and workshops, the creation of new AMC. The research results can contribute to the improvement of textbooks used; the main results and conclusions of the work can be used in integrative courses on religious studies and theology.

The approbation of the research.

The main results of the research were discussed at united session of Pedagogy, Romano-Germanic Philology, English Language Chair Num.1 Departments of YSU. As a result of the experimental teaching at the Faculty of Theology in YSU is confirmed by the initial hypothesis. The developed research materials can be put into practice for teaching the English church-religious sublanguage at the Faculty of Theology.

Five scientific articles on the topic of the thesis have been published.



Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել անգլերեն կրոնական հասկացությունների ուսումնասիրության լեզվաբանական, մասնավորապես՝ ճանաչողական-գործաբանական տեսությունները,
2. վերլուծել անգլերեն եկեղեցակրոնական ենթալեզվի ուսուցման համար նախատեսված հայրենական և արտասահմանյան ուսումնամեթոդական կոմպլեկտները, դրանք գնահատել նոր մեթոդաբանական դիրքերից և ցույց տալ դրանց բարելավման ուղիները,
3. բացահայտել եկեղեցակրոնական, կրոնական տեքստերի, կրոնական սպասարկման ոլորտում ծավալվող խոսույթների ոճաժանրային, գործառական բնութագրերը, դրանց հետ ուսուցողական նպատակներով աշխատանքի առանձնահատկությունները,
4. ստեղծել անգլերեն կրոնական հասկացությունների և դրանց առնչվող բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապար և մշակել կրոնական հասկացությունների և դրանց զուգորդական գոտում գործառնող մասնագիտական, նեղ մասնագիտական, խոսակցական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգ:

Հետազոտության մեթոդական հիմքն են կազմել ճանաչողական լեզվաբանության, ճանաչողական հոգեբանության, գործաբանական լեզվաբանության, հաղորդակցական մոտեցման, հումանիստական, կառուցողական մանկավարժության, օտար լեզուները հատուկ նպատակներով տեսությունների շրջանակներում ձևավորված հայեցակարգերը:

Հետազոտության մեթոդները

1. Մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման տեքստերի լեզվաբանական, խոսութային, ոճաժանրային վերլուծություն:
2. Փորձարարական աշխատանք իրականացնելու նպատակով ուսանողների համասեռ, տարասեռ համակազմի տարբերակում, հայտորոշում, նրանց մասնագիտական, ճանաչողական, պահանջմունքների, դրդապատճառների, նախասիրությունների վերլուծություն:
3. Կրոնական հասկացությունների բովանդակային և գործառական բնութագրերի, մերձակա և զուգորդական դաշտերի ուսումնասիրություն:
4. Հասկացութային մոտեցման տեսանկյունից կրոնական բառապաշարի ընտրության սկզբունքների դասակարգում և համակարգում, հայերենի և անգլերենի կրոնական ենթալեզուների տիպաբանական-զուգորդական վերլուծություն:

5. Նախնական վարկածի, կրոնական տեքստերի ընտրության սկզբունքների, մշակված առաջադրանքների և վարժությունների համակարգի արդյունավետության փորձարարական ստուգում:

Չետագոտության գիտական նորություն այն է, որ ուսումնասիրվել են անգլերեն կրոնական հասկացությունների սահմանման լեզվաբանական ժամանակակից մոտեցումները՝ ուսուցողական գործընթացում կիրառելու նպատակներով: Ստեղծվել է կրոնական հասկացությունների յուրացման կադապար, որի առանցքն է կազմում հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը: Հիմնավորվել է հասկացության մոտեցման արդյունավետությունը փորձարարական ուսուցման ընթացքում: Կարճ ասած ստեղծվել է կրոնական բառապաշարի ուսուցման բազմագործառույթ կադապար, որի հիմքում ընկած է հասկացության մոտեցումը:

Չետագոտության վարկած

Եթե ուսումնասիրվեն տեքստաբանության, խոսույթի վերլուծության, օտարալեզու բառապաշարի յուրացման գիտական ոլորտներում կրոնական հասկացությունների բովանդակային, ոճաժանրային, գործառական բնութագրերը անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցման և յուրացման տեսանկյունից, ապա հիմք կստեղծվի անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապարի ստեղծման, նոր մեթոդական համակարգի մշակման համար:

Չետագոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրվել և վերլուծվել են անգլերեն կրոնական հասկացությունների լեզվաբանական, մեթոդական տեսությունները, բացահայտվել են դրանց բովանդակային, գործաբանական-ճանաչողական գործառույթները, հաղորդակցական-ճանաչողական մոտեցման տեսանկյունից հիմնավորվել է անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցման կադապարի արդյունավետությունը:

Չետագոտության գործնական նշանակությունը

Չետագոտության ընթացքում ստացված արդյունքները և հիմնադրույթները կարող են օգտագործվել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ նախագծելիս և կազմակերպելիս, նոր դասեր, սեմինարներ պլանավորելիս, նոր ուսումնամեթոդական համալիրներ ստեղծելիս: Չետագոտության արդյունքները կարող են հիմք ծառայել շրջանառվող դասագրքերը բարելավելու համար: Աշխատանքի հիմնական արդյունքները և եզրակացությունները կարող են հաշվի առնվել և օգտագործվել կրոնագիտական, աստվածաբանական ինտեգրատիվ դասընթացներ կազմակերպելիս:

Չետագոտության հիմնական փուլերը

Առաջին փուլ (2008-2009): Հստակեցվել են Չետագոտության նպատակը, խնդիրները, առարկան, առաջադրվել է նախնական վարկած, հավաքվել և

religious vocabulary in the process of acquiring the mentality of English speaking clergy, theosophists.

The aim of the research is to develop a methodical system of training religious vocabulary that includes the methods and techniques training theological, ecclesiastical and religious vocabulary, as well as church and religious, national, cultural and colloquial speech.

The objectives of the research:

1. To study the linguistic, particularly cognitive-pragmatic theory.
2. To analyze the domestic and foreign teaching academic-methodical complexes designed to teach church-religious sublanguage, evaluate those complexes from new methodological standpoints and signpost the ways to improve them.
3. To present the stylistic-genre characteristics of church-religious texts, and the peculiarities of working with them for teaching purposes.
4. To create a model of teaching English religious concepts and vocabulary related to them, to develop a methodical system for teaching religious concepts and professional, narrow professional and colloquial vocabulary functioning in their associative zone.

The content of the study is reflected in the structure of the dissertation, which consists of the introduction, 2 chapters, conclusion, bibliography and appendices.

The Scientific novelty of the research lies in the fact that it studies the modern linguistic approaches to teaching English religious concepts. As a result of studying the correlation of word-concept, language-concept, language-mentality, text-discourse the model of teaching vocabulary is created, which functions in the area of religious associative concepts that underlies the methodical system of religious texts and exercises.

The pilot training was carried out at the Faculty of Theology that allows to justify the effectiveness of the proposed model at this stage.

The research theoretical value

The research studies and analyzes both the linguistic theory and methodological theories of English religious concepts, discloses their content and pragmatic-cognitive functions, proves the effectiveness of training model of

SHUSHIK ALBERT GRIGORYAN
THE PECULIARITIES OF TEACHING RELIGIOUS CONCEPTS IN
UNIVERSITY ENGLISH COURSE

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 -
"Methods of teaching and education" (English language).

Summary

The dissertation considers the actual issue of teaching religious lexica with the application of the cognitive-communicative and concept approaches in the ESP classes of English.

The relevance of the research.

The church-religious vocabulary is of great interest both from the viewpoint of grammar theory, semantics, text and discourse analysis and the ESP teaching. It is taught at YSU, Gevorgyan Seminary and Vasgenyan religious collage in Sevan.

The significant changes in linguistics-didactics in the recent years as well as the fact that the investigations of the relevant classes have revealed that the vocabulary referring to church life or various church/liturgical services has pushed forward the urgency of reviewing and developing the ESP teaching strategies and technologies.

The religious and church sublanguage is considered to be multi strata, multi genre and multi style and is directly related to religious studies in theology, literature, different fields of art and science. The integration is important in the worldwide spiritual realm, which means to enter for a dialogue not only with representatives of different religions and faiths, but also to read and understand the huge, sometimes alternative literature that exists especially in English. It concerns both the religious and the atheistic, sectarian literature that represents different ideologies, scientific, literary sources.

It is important that the students acquire easily the English church-religious terms, as they have certain difficulties conversing on various topics, or/and organizing discussions/disputes.

To apply conceptual approach to teaching religious vocabulary allows to reconsider and reassess methodical raining system of teaching the church-religious vocabulary, as according to this approach, the unit of teaching a foreign language is not the word or phrase and but the concept. This assumes the assimilation of church-

վերլուծվել է կրոնական հասկացույթի վերաբերյալ համապատասխան լեզվաբանական, մեթոդական գրականություն:

Երկրորդ փուլ (2010-2011): Յետազոտության խնդիրներին համապատասխան փորձարարական ուսուցման փուլերի հստակեցում, ուսանողների համակազմի ճանաչողական, մասնագիտական պահանջմունքների վերլուծություն: Փորձարարական ուսուցման համար նախատեսված կրոնական տեքստերի և վարժությունների ընտրություն:

Երրորդ փուլ (2011-2012): Փորձարարական ուսուցման փուլային իրականացում, փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների համեմատություն և վերլուծություն: Վերջնարդյունքների և ատենախոսության վերջնական տեքստի շարադրում:

Յետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովվում է տարբեր այն տեսությունների համապարփակ վերլուծությամբ, որոնք հիմք են հանդիսացել տեքստերի և վարժությունների ընտրության և կիրառման համար: Տեսական դրույթները հիմնավորվել են գործնական աշխատանքների ժամանակ: Ստացված արդյունքների հավաստիությունը հիմնավորվել է փորձարարական ուսուցման արդյունքներով, որի ընթացքում հաստատվել են հասկացութային, հաղորդակցական-ճանաչողական մոտեցման սկզբունքների կիրառման արդյունավետությունը:

Աշխատանքը փորձաքննություն անցել է Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում:

Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները՝

1. Կրոնական հասկացությունների և դրանց առնչվող հասկացությունների ընտրությունը և ուսուցումը իրականացվում է հաշվի առնելով լեզվաբանության, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի և այլ հարակից գիտությունների զարգացման միտումները, շեշտը դնելով ճանաչողական լեզվաբանության հետազոտական մեթոդների կիրառման վրա:

2. Անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցումը ենթադրում է ոչ միայն բառային, քերականական, հնչյունաբանական, այլև մշակութային/գործաբանական, ինչպես նաև կրոնական խոսույթների փոխներթափանցման հաղթահարման ընթացակարգերի մշակում և կիրառում:

3. Անգլերեն կրոնական հասկացությունների զուգորդական դաշտերի ուսումնասիրությունը դառնում է ոչ միայն ընկալողական, այլև արտադրողական հմտությունների ձևավորման հիմքը: Այդ համատեքստում նախապատվություն չի տրվում այս կամ այն լեզվական հմտության կամ բառապաշարի ասպեկտի զարգացմանը:

4. Անգլերեն կրոնական հասկացութային ոլորտի ուսումնասիրությունը ենթադրում է ուսանողների հենքային գիտելիքների շարունակական զարգացում ուսուցման ինտերակտիվ մեթոդների, ժամանակակից տեխնո-

լոգիաների, կրոնական բնագրերի, խոսույթների, գերտեքստերի, հաղորդակցության լեզվական, հարալեզվական միջոցների կիրառմամբ:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը 149 համակարգչային էջ է:

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին «ԿՐՈՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲՈՒՅՈՒՄ» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին «Եկեղեցակրոնական տեքստերը որպես մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման միջոց» ենթագլուխը վերաբերում է եկեղեցակրոնական տեքստերին, դրանք որպես բառապաշարի ուսուցման միջոց կիրառելու հիմնախնդիրին:

Սույն ենթագլխում սահմանվում է «տեքստ» հասկացությունը, բացահայտվում է «կրոնական տեքստի» առանձնահատկությունները:

Այդ համատեքստում կրոնական տեքստերի ժանրային տարբաժանմամբ ներկայացվում են սաղմոսը, Սուրբ Գիրքը, աղոթքը, քարոզը, խոստովանությունը, կրոնական երկխոսությունը, կրոնական երկխոսական տեքստերը, կարճ և երկար խոսույթները:

Եկեղեցու, մատուռի, տարբեր կրոնական պատկերների անգլերեն լեզվով լուսաբանումը դասերի ընթացքում ունի մեծ ուսուցողական, դաստիարակչական ներուժ: Տեքստերի պատկերային բաղադրիչի դերը մեծ է հատկապես կրոնական բնույթի գովազդներում, քարոզչական պաստառներում, որտեղ կրոնական դոգման ներկայացնող տեքստերը համակցվում են համապատասխան նշանային համակարգի բաղադրիչներով՝ կրոնական որևէ ուղղություն, աղանդ ներկայացնող խորհրդանիշներով: Այդ խորհրդանիշները համարվում են տեքստաստեղծ կամ խոսութաստեղծ և մեծ ազդեցություն ունենում լսարանի վրա:

Հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում յուրացնել նշված տպատառային, խորհրդանշային կոդերը: Ակնհայտ է որ, անգլախոս երկրներում տարբեր կրոնական համայքներ են ապրում, և միայն կրոնական բառապաշարի ուսուցմամբ հնարավոր չէ ձեռք բերել համապատասխան հենքային գիտելիքներ: Անգլալեզու ԶԼՄ-ներում կարելի է հանդիպել մեծ քանակությամբ կրոնական կրեոլ տեքստերի: Խնդիրն այն, է թե ինչպես դրանք կիրառել ուսուցողական նպատակներով:

Հիմնավորվում է այն գաղափարը, որ եկեղեցակրոնական ճարտասանական տեքստերը տարբերվում են գիտական, գեղարվեստական և

Теоретическое значение исследования

Изучены и проанализированы лингвистические и методические теории английских религиозных концептов, раскрыты их содержательные и прагматические-когнитивные функции, обоснована эффективность модели обучения церковно-религиозной лексике с точки зрения коммуникативно-когнитивного подхода.

Практическое значение исследования

Полученные результаты и основные положения могут быть использованы при проектировании и организации профессионально-ориентированных курсов, при планировании новых уроков, и семинаров, при создании новых УМК. Результаты исследования могут способствовать усовершенствованию используемых учебников. Основные результаты и выводы работы могут быть использованы при интегративных курсов по религиоведению и богословии.

Апробация результатов исследования.

Основные результаты проведенного исследования были обсуждены на заседаниях кафедр педагогики, романо-германской филологии, кафедры английского языка 1 в ЕГУ . В результате экспериментального обучения на факультете Богословии ЕГУ подтвердилась первоначальная гипотеза. Разработанные материалы исследования внедрены в практику преподавания церковно-религиозному подязыку английского языка на факультете Богословии.

По теме диссертации опубликованы пять научные статьи.

выражение, а концепт. Это предполагает усвоение церковно-религиозной лексики в процессе освоения менталитета церковнослужителей, теософов, говорящих на английском языке.

Целью исследования является разработка методической системы обучения религиозной лексике, которая включает методы и технологии обучения религиозной-религиоведческой, церковно-религиозной, церковно-религиозной, национально-культурной и пограничной-разговорной лексике.

Задачи исследования

1. Изучить лингвистические, в частности когнитивно-прагматические теории.
2. Проанализировать отечественные и иностранные учебно-методические комплекты, предназначенные для обучения церковно-религиозному подязыку, оценить их с новых методологических позиций и показать пути совершенствования.
3. Раскрыть стилистические-жанровые характеристики церковно-религиозных текстов и особенности работы с ними в учебных целях.
4. Создать эффективную модель обучения английским религиозным концептам и лексике, относящиеся к ним и разработать методическую систему обучения религиозным концептам и профессиональной, узко профессиональной и разговорной лексике, функционирующей в их ассоциативной зоне.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 2 глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования заключается в том, что исследованы современные лингвистические подходы к обучению английским религиозным концептам. В результате исследования соотношения слово-концепт, язык-концепт, язык-менталитет, текст-дискурс, создана модель обучения лексике, функционирующая в ассоциативной зоне религиозных концептов, что и лежит в основе методической системы религиозных текстов и упражнений. Осуществлено экспериментальное обучение на факультете богословия, которое позволило обобщить эффективность предложенной модели.

այլ բնույթի տեքստերից նրանով, որ դրանց ճշմարտացիությունը հիմնավորվում է նախ և առաջ Աստծո խոսքով, Քրիստոսի իմաստախոսություններով, առաքյալների վկայություններով և այլն: Այլ հարց է, թե ինչ լեզվական արտահայտչամիջոցներ են գերակշռում կրոնական բնույթի ճարտասանական տեքստերում:

Առաջին գլխի երկրորդ «կրոնական հասկացույթի բովանդակային և գործառնական բնութագրերը» ենթագլուխը նվիրված է կրոնական հասկացույթի բովանդակային և գործառնական բնութագրերի բացահայտմանը:

Առաջարկվում է հասկացույթների տեսակների դասակարգումն օգտագործել, առաջին, բառ-հասկացույթ հարաբերակցությունը ներկայացնելու համար, երկրորդ, հասկացույթային մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորելու համար: Ակնհայտ է, որ բառի մակարդակում այդ հասկացությունները գործուն չեն: Համապատասխանաբար, կրոնական հասկացույթի ուսումնասիրությունը բերում է նշված հասկացությունների յուրացմանը լեզվական մակարդակում: Օրինակ՝ Աստված հասկացույթը հայերեն և անգլերեն լեզուներում կարող են զուգորդել նույն և տարբեր զգայական պատկերներ:

Հասկացույթի զգայական բաղադրիչը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրության առարկա դարձնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կրոնը, եկեղեցին, Աստվածաշունչը, որոնք ընկալման մակարդակում տարբեր մարդկանց մոտ տարբեր մեկնաբանություններ ունեն:

Հաշվի առնելով ներկայացված մոտեցումները, գալիս ենք այն եզրահանգման, որ միայն կրոնական բառապաշարի ուսուցումը կազմակերպելով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ ուսանողները կարողանան հանգամանորեն ուսումնասիրել անգլախոս եկեղեցականների, ինչպես նաև հավատացյալների գիտակցությունը և մշակույթը: Դա նախ և առաջ ենթադրում է համապատասխան գեղարվեստական գրականության, մանուկ ընթերցանություն ոչ միայն անգլերեն, այլև հայերեն լեզուներով: Ուսանողները պետք է հնարավորություն ունենան համեմատել, հակադրել, վերլուծել հայկական և անգլիական եկեղեցակրոնական իրողությունները:

Ամեն մի մոդուլի շրջանակում, հստակորեն պլանավորվում է համապատասխան գրականության ընթերցանությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն ընթերցանությունն օգնում է ժամանակ շահել, քանի որ անգլերեն դժվար տեքստերի ընթերցանությունը շատ ուսանողների մոտ վերածվում է բառարանի հետ յուրահատուկ աշխատանքի: Նման աշխատանքի ընթացքում ուսանողները տարվում են նոր բառեր դուրս գրելու և դրանք սերտելու գործով, որն էքստենսիվ, դանդաղ ու ժամանակատար է և, ընդհանուր առմամբ, չի զարգացնում ուսանողների հենքային, հանրամշակութային գիտելիքները:

Առաջին գլխի երրորդ «Կրոնական խոսույթի հետ աշխատանքի ճանաչողական-գործաբանական հայեցակերպը» ենթազուխը ներկայացնում է կրոնական խոսույթի հետ աշխատելու ճանաչողական-գործաբանական հայեցակերպը:

Ներկայացվում է ճանաչողական-գործաբանական մոտեցումը, խոսույթի հետ աշխատանքի ճանաչողական կադապարները, խոսույթի ծավալման գործաբանական ասպեկտը, խոսութային վերլուծության առանձնահատկությունները: Նշվում է, որ կիրառական մակարդակում խոսութային վերլուծությունը նպաստավոր հող է ստեղծում կրոնական բանավոր խոսքի ուսումնասիրության համար:

Ճանաչողական-հաղորդակցական տեսանկյունից նշվում է, որ կրոնական խոսույթի բովանդակությունը բացահայտելու համար պետք է հաշվի առնենք լեզվակիրների մտածելակերպը, ավանդույթները, սովորույթները, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության կարծրատիպերը: Այդ համատեքստում առաջին պլան է մղվում գերտեքստի հաղորդակցական գործառույթը: Այն նպատակահարմար է կիրառել որպես հեռահաղորդակցական-ինտերակտիվ տեխնոլոգիա, մտազորի, բանավեճ, քննարկումներ, խմբային, համագործակցային աշխատանք կազմակերպելիս:

Ուսուցողական նպատակներով կրոնական խոսույթը ներկայացնելիս, առանձնացվում են առաջնային /Աստված, դրախտ, դժոճք, մեղք, հոգի, տաճար/ և երկրորդային /սարսափ, օրենք, պատիժ, սեր և այլն/ հասկացությունները, որոնք ներառում են աշխարհիկ ոլորտի հասկացությունները:

Երկրորդ «ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՈՒՊԱՇԱՐԻ ՌԲՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԶԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԶԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ» վերնագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից :

Առաջին «Անգլերեն եկեղեցակրոնական բառապաշարի ուսուցման հասկացութային մոտեցումը» վերնագրով ենթազուխը ներկայացնում է եկեղեցակրոնական անգլերեն ենթալեզվի բառակազմը, ինչպես նաև համագիտական, միջգիտական և նեղ մասնագիտական տերմինաբանությունը:

Բառապաշարի թեմատիկ խմբերը դասակարգելիս հաշվի են առնվել հայկական և անգլիական եկեղեցիների, դրանց հարակից կառույցների (Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի, Cathedral Church of St. Philip, Cathedral Church of the Holy and Undivided Trinity և այլն), ինչպես նաև եկեղեցական ծիսակատարությունների, հանդիսությունների, արարարողակարգերի, եկեղեցու սպասավորների հանդերձանքի անվանումները:

Անգլալեզու եկեղեցու սպասավորների առօրյա-խոսակցական բառապաշարը յուրացնելու արդյունավետ եղանակ է ուսումնասիրել կրոնական բառապաշարի այն թեմատիկ խմբերը, որոնք վերաբերում են ծիսակատարություններին, արարողակարգին, և իհարկե, ամենօրյա խոսակցական բառապաշարին:

ГРИГОРЯН ШУШИК АЛЬБЕРТОВНА
ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ РЕЛИГИОЗНЫМ КОНЦЕПТАМ В
ВУЗОВСКОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык)”.

Защита диссертации состоится 19-го декабря 2014 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 009 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена актуальной проблеме обучения английской религиозной лексике с применением когнитивно-коммуникативного и концептуального подходов в профессионально-ориентированном курсе английского языка.

Актуальность исследования. Религиозно-церковный подъязык многогранен, выделяется жанровыми и стилистическими разнообразием и имеет непосредственное отношение к религиоведению, богословию, художественной литературе, разным сферам искусства и науки. Важна интеграция во всемирной духовной сфере, войти в диалог не только с представителями разных религий и вероисповеданий, но и читать, понять огромную, порой альтернативную литературу. Это относится не только собственно религиозным, но и атеистическим, сектантским, представляющим разные идеологии, научные, литературные первоисточники.

Важно то, что студенты легко усваивают английские церковнорелигиозные термины, однако они имеют определенные трудности при беседовании по разным темам, при организации обсуждений на иностранном языке.

Применение концептуального подхода к обучению английской религиозной лексике в армяноязычной аудитории позволяет пересмотреть, переоценить методические системы обучения церковно-религиозной лексике, так как согласно этому подходу, единицей обучения иностранному языку является ни слово, ни

9. Համակրոնական նշանակության հասկացությունները, դրանց առնչվող լեզվական, դարձվածային միավորները արտացոլում են մի կողմից՝ տվյալ ժողովրդի վարքագծային մշակույթի առանձնահատկությունները, մյուս կողմից՝ ամեն մի խոսքային իրադրությունում «Աստված», «հավատ», «սեր», «Փրկիչ» և այլ հասկացությունները տարբեր համեմատվող լեզուներում տարբեր իմաստային դաշտերի միավոր են:

10. Համացանցային աղբյուրների հետ աշխատելու մշակույթի ձևավորումը նպաստում է ուսանողների ինքնուրույն աշխատանքի կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Ուսանողները կարողանում են ճանաչել տարբեր իրակություն-տերմիններ, որոնք առնչվում են տարբեր կրոնական-մշակութային տիրույթների: Փաստորեն, կրոնական տերմիններ ուսումնասիրելով, ուսանողները ոչ միայն լեզու են սովորում, այլև զարգացնում են իրենց կրոնական գիտակցությունը և յուրացնում են լեզվակիր եկեղեցու սպասավորների մշակույթը, քանի որ դրանք դիտարկում են համապատասխան հասկացության զուգորդական դաշտում:

11. Փորձարարական ուսուցման ընթացքում հիմնավորվել է հասկացության մոտեցման կիրառման արդյունավետությունը թե՛ տեքստերի, թե՛ վարժությունների ընտրության, թե՛ դրանց ուսուցողական նպատակներով կիրառման մակարդակներում:

Ատենախոսության **հիմնական դրույթներն** արտացոլված են ատենախոսի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում:

1. Շ. Ա. Գրիգորյան, Եկեղեցակրոնական տեքստերը որպես մասնագիտական կողմնորոշման բառապաշարի ուսուցման միջոց: FLSP, 2(11), Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2014, էջ՝91-102
2. Շ. Ա. Գրիգորյան, Անգլերեն կրոնական բառապաշարի ուսուցման վարժությունների համակարգը: Օտար Լեզուները Բարձրագույն Դպրոցում, 1(16), Երևան, 2014, էջ՝120-127
3. Ի. Կարապետյան, Շ. Ա. Գրիգորյան, Եկեղեցակրոնական բառապաշարի ընտրության և ուսուցման իմացական-հաղորդակցական մոտեցումը: Մանկավարժական Միտք, 3-4, Ձանգակ հրատարակչություն, Երևան, 2013, էջ՝ 115-122
4. Շ. Ա. Գրիգորյան, Կրոնական հասկացությունների ուսուցման յուրահատկություններն անգլերենի բուհական դասընթացում: Օտար Լեզուները Բարձրագույն Դպրոցում, 13, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012, էջ՝199-206
5. Շ. Ա. Գրիգորյան, Կրոնական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները: Մանկավարժական Միտք, 3-4, Ձանգակ հրատարակչություն, Երևան, 2012, էջ՝101-106

Նշվում է, որ եկեղեցակրոնական խորհրդանիշ-առարկաների և խորհրդանիշ-բառերի միջոցով անգլերենի ուսուցումը նպատակահարմար է դիդակտիկական մատչելիության, զննականության, ինչպես նաև կյանքի հետ կապի սկզբունքների կիրառման տեսանկյունից: Արդյունավետ է խորհրդանիշ-առարկաները ցույց տալ նկարների, պատկերների, տեսահոլովակների միջոցով: Ուսանողները տվյալ բառապաշարի ներմուծման առաջին փուլում ընթերցում են տվյալ բառերի անգլերեն բացատրությունը: Հաջորդ փուլում նրանք փորձում են դրանք թարգմանել առանց բառարանի և վերջին փուլում կազմում են նախադասություններ և դրանք կիրառում երկխոսություններում:

Երկրորդ՝ «Կրոնական անհամարժեք բառապաշարի ուսուցման առանձնահատկությունները» ենթագլուխը նվիրված է կրոնական ազգամշակութային բառապաշարի ընտրության և ուսուցման առանձնահատկություններին: Նշվում է, որ մշակութային նշույթավորում ունեցող բառապաշարը ներկայացնում է եկեղեցու սպասավորների վարքագծային մշակույթը, նրանց արժեքային կողմնորոշիչները, հոգեբանական առանձնահատկությունները տարբեր իրադրություններում, տարբեր ժամանակաշրջաններում:

Վերջին՝ «Անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցման կադապարի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը» ենթագլուխը ներկայացնում է անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցման կադապարի արդյունավետությունը: Սույն ենթագլխում վերլուծվում են այն դասագրքերը, որոնք կիրառվում են ՀՀ-ի բուհերում:

Ճանաչողական-կառուցողական մոտեցման տեսանկյունից կարևորվում է, որ օտարալեզու խոսքի ձևավորումը տեղի ունենա խաղային տեխնոլոգիաներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողները նոր նյութի յուրացման ընթացքում հաղթահարում են ոչ միայն ճանաչողական, այլև հուզական բնույթի դժվարություններ:

Կարևորվում է այն գաղափարը, որ անհրաժեշտ է կրոնական տեքստերի, երկխոսությունների, սաղմոսների, երգերի ունկնդրման մշակույթ ձևավորել:

Փորձարարական խմբերում արդյունավետորեն փորձարկվեցին կրոնական երգերի ունկնդրման մեթոդիկան, որը հարուստ ավանդույթներ ունի քրիստոնեական աշխարհում: Անհրաժեշտ է սկզբում տալ կրոնական երգերի որոշակի ցանկ, որոնք երբեմն ծանոթ են ուսանողներին: Նրանք երգերը հիմնականում լսում են արտալսարանային աշխատանքի ժամանակ: Ուսանողները սիրով են աշխատում տրվող երգերի սկրիպտների հետ: Լավագույն կատարողները կարող են նախօրոք կազմակերպված երեկոյի ժամանակ կատարել իրենց սիրած երգերը թե՛ հայերեն, թե՛ անգլերեն լեզուներով:

Հատկաբանությունների, ասույթների և ասացվածքների ուսուցումը նույնպես իրականացվում է աստվածաշնչյան հայտնի ասացվածքների ցանկի

ներմուծմամբ: Ընդ որում, ուսանողներին ներկայացվում են համացանցում հայտնի կայքերը:

Փորձարարական աշխատանքի ընթացքում ուսանողներին առաջարկվել են ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժություններ: Ուսուցման նախնական փուլում նրանց առաջարկվում է տարբեր դժվարության վարժություններ, որոնք հնարավոր է կատարել, եթե ուսանողները ունեն որոշակի հենքային և մասնագիտական գիտելիքներ: Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից արդյունավետ է կրոնական բնույթի անեկդոտների, կատակների կիրառումը ուսուցման գործընթացում:

Փորձարարական աշխատանքի ընթացքում կիրառվել են մի շարք ինտերակտիվ մեթոդներ և անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներ:

Ուսուցման տարբեր փուլերում ուսանողները լրացնում են Վենի դիագրամա, համեմատելով Յայ առաքելական կամ անգլիական կաթոլիկ եկեղեցիները, դրանց ծիսակարգերը, բացահայտում դրանց ընդհանուր և տարբերակիչ կողմերը:

Ձևավորող փորձարարական աշխատանքի ընթացքում կիրառվել են այսպես կոչվող վերծանման վարժություններ, երբ տրվում է անգլերեն որևէ հասկացության տառերը հաջորդականությունը խառնած: Ուսանողները պետք կարողանան այնպես դասավորել տառերը, որ ստացվի համապատասխան բառը:

Փորձարարական աշխատանքով հաստատվեց, որ անգլերեն լեզվով, մակագրերով և առանց մակագրերի ֆիլմերի դիտումը նպաստում է նույն գերհասկացությամբ լեզվական, մշակութային, մտածելակերպի մակարդակով յուրացնելուն: Ակնհայտ է, որ այստեղ խոսք է գնում անգլալեզու մարդկանց մտածելակերպի մասին: Լինելով քրիստոնյա, նրանք այլ լեզվաարտահայտչամիջոցներ են գործածում Քրիստոսին ներկայացնելու համար:

Ֆիլմերի դիտումը որակական նոր մակարդակի հասցնելու նպատակով, նպատակահարմար է ընտրել 4-5 հոգանոց խմբեր, որոնք դիտում և վերլուծում են որևէ կրոնական ֆիլմ: Ամեն մի խումբ ներկայացվող ցանկից մի ֆիլմ է ընտրում: Յետո նրանք առանձնացնում են Քրիստոսի, առաքյալների, այլ կերպարների կողմից կիրառվող լեզվաարտահայտչամիջոցները՝ հատկաբանությունները, դարձվածները, իրույթները, խոսակցական կաղապարույթները: Դրա համար անհրաժեշտ է, որ դասախոսը նախօրոք ներկայացնի ֆիլմի դիտմանը ներկայացվող պահանջները: Ֆիլմի դիտումը տեղի է ունենում արտալսարանային պայմաններում: Սակայն, ուսանողները ներկայացնում են այն բառանյութը, հասկացությունները, կրոնական արտահայտությունները, որոնց միջոցով հնարավոր է դառնում նկարագրել ֆիլմի սյուժեն, բովանդակությունը, կոլորիտը, հանգուցալուծումը, գլխավոր գաղափարը:

կրոնական բնույթի ճարտասանական տեքստերում: Այդ փաստը կարևոր պայման է ուսուցողական նպատակներով դրանք կիրառելու ընթացքում:

3. Հասկացութային մոտեցումն առանձնանում է հատկապես զուգորդական բնութագրերի տեսանկյունից, առ այն, որ այն կիրառելիս, հաշվի չի առնվում բառապաշարի ընտրության չեզոքության սկզբունքը և յուրաքանչյուր բառ յուրացվում է, «ոչ թե սովորում ենք լեզու, այլ յուրացնում ենք մտածելակերպ սկզբունքով»:

4. Չնայած լեզվաբանները աշխատում են չկաղապարել հասկացությամբ, հաշվի առնելով ինտեսիոնալի և իմլիկացիոնալի հարաբերակցության շարունակական փոփոխությունը, նպատակահարմար է հասկացությունների տեսակների դասակարգումն օգտագործել, առաջին՝ բառ-հասկացությամբ հարաբերակցությունը ներկայացնելու համար, երկրորդ՝ հասկացութային մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորելու համար:

5. Հասկացության հուզական բաղադրիչը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրության առարկա դարձնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կրոնը, եկեղեցին, Աստվածաշունչը, որոնք ընկալման մակարդակում տարբեր մարդկանց մոտ տարբեր մեկնաբանություններ ունեն:

6. Հայալեզու և անգլալեզու հավատացյալների և եկեղեցու սպասավորների մտածելակերպի արժեքային համակարգերի, հավատալիքների, հոգեբանական կարծրատիպերի մասին գիտելիքներ կարելի է ստանալ ոչ միայն գեղարվեստական կամ գիտական գրականություն ընթերցելով, այլև՝ համապատասխան վավերագրական կամ գեղարվեստական ֆիլմեր դիտելով: Ընդ որում՝ այդ ֆիլմերը կարող են վերաբերել անգլիացիների ոչ միայն հավատալիքային, հավատքային, դավանապաշտական, այլև՝ հոգեբանական, հանրամշակութային առանձնահատկություններին:

7. Հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում կրոնական խոսույթը վերլուծել տարբեր տեսանկյուններից, շեշտը դնելով անգլախոս հավատացյալների և եկեղեցու սպասավորների մտածելակերպի առանձնահատկությունները բացահայտելու վրա: Ցանկացած խոսքային գործունեություն ծավալելու հնտություն զարգացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել արտալեզվաբանական գործոնները:

8. Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից դիտարկելով եկեղեցակրոնական բառապաշարի ընտրության հիմնախնդիրը, կարևորվում են խոսքային իրադրությունների բովանդակային բնութագրերը, այն առումով, որ կրոնական արտահայտությունները, բառերն ու բառակապակցությունները յուրացվում են արագ ու հեշտ և մտապահվում են երկար, եթե հաշվի է առնվում դրանց իմաստային-զուգորդական դաշտերը, դրանց կիրառման խոսքային ենթատեքստերը և իրական իրադրությունները:

կարողությունները» բավականին լավ են զարգացած երկու խմբում էլ, քանի որ ուսանողների մեծ մասը բավականին լավ ծանոթ են Սուրբ Գրքի հայերեն տարբերակին: Անգամ այդ պարագայում, փորձարարական խմբի ուսանողները միջինը վեց միավոր առաջադիմություն են ապահովում, իսկ ստուգողական խմբի ուսանողները՝ երեք:

«Անգլերեն կրոնական տերմիններն առանց բառարանի թարգմանելու կարողությունը» նույնպես բավականին լավ է զարգացած ուսանողների մոտ, քանի որ նրանք հեշտությամբ են ճանաչում համակրոնական, միջազգային տերմինները՝ փորձարարական խմբում առաջադիմությունը կազմում է հինգ միավոր, իսկ ստուգողական խմբում՝ երեք:

«Կրոնական իրակությունները ճանաչելու և մեկնելու կարողությունը» նույնպես արագ է զարգանում փորձարարական խմբում, քանի որ ստուգողական խմբում այդ հասկացությունը լեզվական գիտելիքի մակարդակում չի դիտարկվում:

«Կրոնական խորհրդանիշները ներկայացնելու կարողությունը» նույնպես արագ է զարգանում այն խմբում, որտեղ կատարվում է ծրագրավորված բացատրական աշխատանք համապատասխան լուսաբանումներով:

Փորձարարական աշխատանքի վերջում փորձարարական խմբի ցույց տված արդյունքները գերազանցում են ստուգողական խմբի ցույց տված արդյունքներից: Կարևորն այն է, որ ուսանողները հիմնականում գիտակցեցին, թե ինչ դեր են խաղում իրենց մասնագիտական և հենքային գիտելիքները անգլերեն կրոնական բառապաշարի յուրացման գործում:

Այսպիսով, ստուգողական և փորձարարական խմբերի ցույց տված արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողները առաջադիմել են միջինը 16 տոկոս, իսկ ստուգողական խմբում՝ 6 տոկոս:

Եզրակացություններ

1. Այագա աստվածաբանները պետք է կարողանան օգտվել տարբեր եկեղեցակրոնական տեղեկատվական աղբյուրներից, ԶԼՄ-ներում շրջանառվող տեքստերից, խոսույթներից, ընթերցել, թարգմանել և, իհարկե, վերարտադրել: Եկեղեցակրոնական տեքստերը հանդես են գալիս որպես մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման տեքստեր, քանի որ դրանք վերաբերում են թե՛ տեսական-աստվածաբանական, կրոնաբանական, եկեղեցաբանական ճանաչողության ոլորտներին, թե՛ առօրյա-խոսակցական հաղորդակցական ոլորտին:

2. Եկեղեցակրոնական ճարտասանական տեքստերը տարբերվում են գիտական, գեղարվեստական և այլ բնույթի տեքստերից նրանով, որ դրանց ճշմարտացիությունը հիմնավորվում է նախ և առաջ Աստծո խոսքով, Քրիստոսի իմաստախոսություններով, առաքյալների վկայություններով և այլն: Այլ հարց է, թե ինչ լեզվական արտահայտչամիջոցներ են գերակշռում

Հասկացությամբ մոտեցման տեսանկյունից կարևոր է, որ խմբային կամ լսարանային դիտման ժամանակ ուսանողները ընտրեն կրոնական հասկացությունների զուգորդական դաշտը ներկայացնող որևէ բաղադրամաս: Որոշ ուսանողներ միայն ֆիլմի կերպարների հանդերձանքն են ներկայացնում, կամ սննդակարգը, շրջապատող կենդանիները: Մյուսները առանձնացնում են Քրիստոսի առածները: Երրորդ խումբը շեշտը դնում է ֆիլմի երաժշտության ներկայացման վրա, որտեղ վերլուծվում են սաղմոսները, հոգևոր երգերը, եթե դրանք առկա են տվյալ ֆիլմում:

Փաստորեն, ուսանողները խոսության վերլուծության են ենթարկում տվյալ ֆիլմը, որն ընդլայնում է տվյալ հասկացության զուգորդական դաշտի սահմանները: Ուսանողները նոր արժեքային համակարգի դիրքերից են վերլուծում քրիստոնեական գաղափարները, արժեքները, ճշմարտությունները, ամեն անգամ ընդգծելով հայերենի և անգլերենի տարբերությունները, հատկապես, երբ խոսք է գնում անհամարժեք բառապաշարի մասին:

Աստիճանաբար փորձարարական խմբում ուսանողները յուրացնում են նախաֆիլմային, հետֆիլմային վարժությունների կատարման տարրերը:

Փորձարարական աշխատանքի ընթացքում ստուգվել են ուսանողների ընթերցողական, թարգմանական, ունկնդրողական, խոսքային, վերլուծական հետևյալ կարողությունները՝

1. վերլուծական ընթերցանություն,
2. առանց Աստվածաշնչի հայերեն տարբերակի ընթերցանության անգլերեն Սուրբ Գրքի, սաղմոսների հայերեն թարգմանություն
3. առանց բառարանի անգլերեն կրոնական տերմինների թարգմանություն,
4. կրոնական իրակությունների ճանաչում և մեկնում,
5. կրոնական խորհրդանիշների ներկայացում,
6. անգլերեն կրոնական երգերի բովանդակության ներկայացում,
7. կրոնական ֆիլմերի բովանդակության ներկայացում մակագրերով,
8. կրոնական ֆիլմերի բովանդակության ներկայացում առանց մակագրերի
9. եկեղեցու սպասավորների խոսքային վարքագծի վերլուծում,
10. եկեղեցու սպասավորների ոչ խոսքային վարքագծի վերլուծում:

Գիտափորձի ընթացքում չեն ստուգվել բոլոր այն կարողությունները, որոնք ձևավորվում են հասկացությամբ մոտեցման կիրառման արդյունքում: Դրանց անդրադառնում ենք անուղղակի: Ուսանողների խոսքային կարողությունները ստուգվել են 20-բալանոց համակարգով: Ամեն մի կարողության փոփոխություն վերլուծվել է առանձին, հաշվի առնելով դրանց փոխադարձ կապը:


Աղյուսակ 1.

Փորձարարական եվ ստուգողական խմբերի ցույց տված արդյունքները

Կարողություններ	Փորձարարական խումբ N – 39		Ստուգողական խումբ N – 41	
	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում
1. վերլուծական ընթերցման կարողություններ	10	14	9	10
2. առանց Աստվածաշնչի հայերեն տարբերակի ընթերցանության, անգլերեն Սուրբ Գրքի, սաղմոսների հայերեն թարգմանության կարողություններ	11	17	11	14
3. անգլերեն կրոնական տերմիններն առանց բառարանի թարգմանելու կարողություն	12	17	12	15
4. կրոնական իրակությունները ճանաչելու և մեկնելու կարողություն	8	12	9	10
5. կրոնական խորհրդանիշերը ներկայացնելու կարողություն	10	16	10	12
6. անգլերեն կրոնական երգերի բովանդակությունը ներկայացնելու կարողություն	9	15	9	11
7. կրոնական ֆիլմերի բովանդակությունն նակագրերով ներկայացնելու կարողություն	10	16	9	12
8. կրոնական ֆիլմերի բովանդակությունն առանց	9	15	9	12

մակագրերի ներկայացնելու կարողություն				
9. եկեղեցու սպասավորների խոսքային վարքագիծը վերլուծելու կարողություն	8	15	8	11
10. կրոնական բեմաներով երկխոսելու ունակություն	9	16	8	10

Տրամագիր 1



Ուսանողների վերլուծական ընթերցման կարողությունները զարգանում են կրոնական առարկաները հայերենով անցնելիս: Սակայն անգլերեն լեզվով նրանք դժվարությամբ են կրոնական տեքստեր վերլուծում: Պատահական չէ, որ արդյունքներն անգամ փորձարարական խմբում հուսադրող չեն: Փորձարարական խմբում առաջադիմությունն ընդամենը երեք միավոր է, և պայմանավորված է այն փաստով, որ ուսուցման ընթացքում ուսանողները յուրացնում են որոշակի լեզվագիտական բառապաշար, որն անհրաժեշտ է կրոնական տեքստը վերլուծելու համար:

«Առանց Աստվածաշնչի հայերեն տարբերակի ընթերցանության անգլերեն Սուրբ Գրքի, սաղմոսների հայերեն թարգմանության